600.0423.27.11.20

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

27 նոյեմբերի 2020 թվականի №423Ա
ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 9-Ի №397Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2016 թվականի դեկտեմբերի 9-ի №397Ա որոշմամբ հաստատված՝ «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների (այսուհետ՝ Ծառայություններ) մատուցման ԼՋ№0001 լիցենզիայի (այսուհետ՝ Լիցենզիա) պայմանների №3 հավելվածի 16-րդ կետը, համաձայն որի բաժանորդների համար Ծառայությունների մատուցման հաշվարկային տարվա ճշգրտված և գործող գումարային սակագների տարբերությունը, Ընկերության և Հանձնաժողովի փոխադարձ համաձայնությամբ, նույն կետով նախատեսված ճշգրտումից հետո, կարող է հաշվի առնվել հաջորդ կամ հետագա տարիների սակագները հաշվարկելիս,

բ) որ Ընկերությունը 2020 թվականի նոյեմբերի 13-ի №ՄՇ/24736 գրությամբ տվել է իր համաձայնությունը՝ Հանձնաժողովի կողմից 2020 թվականի համար հաշվարկված և Հանձնաժողովի 2019 թվականի նոյեմբերի 20-ի №429Ն որոշմամբ բաժանորդների համար սահմանված Ծառայությունների գումարային սակագների տարբերությունը Լիցենզիայի պայմանների 16-րդ կետով նախատեսված ճշգրտումից հետո հաշվի առնել 2022 թվականի սակագների հաշվարկներում,

և հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հանձնաժողովը **որոշում է**.

1. Հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 9-ի «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերությանը խմելու ջրի մատակարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման լիցենզիա տրամադրելու մասին» №397Ա որոշման 2-րդ կետով հաստատված՝ Ընկերության Ծառայությունների մատուցման Լիցենզիայի պայմանների «Սակագներ և սակագների ճշգրտումներ» №3 հավելվածի №1 աղյուսակը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021 թվականի հունվարի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ **Ս. ԱՂԻՆՅԱՆ**

ք. Երևան
27 նոյեմբերի 2020թ.

Հավելված
Հայաստանի Հանրապետության հանրային
ծառայությունները կարգավորող հանձնաժողովի
2020 թվականի նոյեմբերի 27-ի №423Ա որոշման

«Աղյուսակ 1.

№	Անվանումներ	Նշանակումներ	Վարձակալության հաշվարկային տարիներ (i)														
			1 (2017)	2 (2018)	3 (2019)	4 (2020)	5 (2021)	6 (2022)	7 (2023)	8 (2024)	9 (2025)	10 (2026)	11 (2027)	12 (2028)	13 (2029)	14 (2030)	15 (2031)
1.	Բազիսային մանրածախ սակագին, դրամ/մ³	T_b	150	155	162	147	147	177	177	170	160	152	137	128	123	115	108
2.	Սույն հավելվածի 16-րդ կետի համաձայն որոշված՝ նախորդ հաշվարկային տարիներից i-րդ հաշվարկային տարի տեղափոխված սակագնի մեծություն, դրամ/մ³	$\Delta T'_i$	0	0	0	0	0	-1.468	0	0	12.135	0	0	0	0	0	0
3.	Մանրածախ ջրամատակարարման բազիսային ծավալ, մլն մ³	V_b	123	127	124	128	133	143	148	151	155	159	162	165	168	171	174
4.	Սղաճով ճշգրտվող սակագնի բաժնեմաս	ΔI_b	60%	60%	60%	60%	60%	60%	60%	60%	60%	60%	60%	60%	60%	60%	60%
5.	Էլեկտրաէներգիայի սակագներով ճշգրտվող սակագնի բաժնեմաս	ΔEP_b	13%	13%	13%	13%	13%	13%	13%	13%	13%	13%	13%	13%	13%	13%	13%
6.	Բազիսային սակագնի ճշգրտման չենթարկվող բաժնեմաս	ΔNAP_b	27%	27%	27%	27%	27%	27%	27%	27%	27%	27%	27%	27%	27%	27%	27%
7.	Մեծածախ ջրամատակարարման բազիսային սակագին, դրամ/մ³	T^1_{wb}	30.0	31.0	32.4	29.4	29.4	35.1064	35.4	34.0	34.427	30.4	27.4	25.6	24.6	23.0	21.6
8.	Մեծածախ ջրահեռացման բազիսային սակագին, դրամ/մ³	T^2_{wb}	15.0	15.5	16.2	14.7	14.7	17.5532	17.7	17.0	17.2135	15.2	13.7	12.8	12.3	11.5	10.8
9.	«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» փակ բաժնետիրական ընկերության ստորգետնյա ջրերի հեռացման բազիսային սակագին, դրամ/մ³	T^3_{wb}	9.0	9.0	9.0	9.0	9.0	9.0	9.0	9.0	9.0	9.0	9.0	9.0	9.0	9.0	9.0

1. Սույն աղյուսակի 7-րդ կետով ներկայացվող Մեծածախ ջրամատակարարման բազիսային սակագինը հավասար է 1-ին և 2-րդ կետերով ներկայացվող սակագների գումարի 20%-ին, իսկ 8-րդ կետով ներկայացվող Մեծածախ ջրահեռացման բազիսային սակագինը՝ 1-ին և 2-րդ կետերով ներկայացվող սակագների գումարի 10%-ին:»: